

Հավելված  
ՀՀ փոխվարչապետի N 58 - Ա  
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԽԱՐԲԵՐՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՀՈՒՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Խարբերղի մասնագիտացված մանկատանն ապրող ֆիզիկական և մտավոր խանգարումներ ունեցող երեխաների և երիտասարդների համար կահույքի տրամադրում՝ հաշվի առնելով նրանց առանձնահատուկ կարիքները և ֆիզիկական վիճակը:
2.	Ծրագրի բարեգործական դրակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բարայան 23/4)
4.	Ծրագիրը կատարողը	«Ձեզ համար» բարեգործական հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, քաղաք Մասիս, Հերացու փողոց 5Ա, ՀՎՀՀ 02232361)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզի Մասիս համայնքի գյուղ Նոր Խարբերղ, «Խարբերղի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	40,350,500 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզի Մասիս համայնքի գյուղ Նոր Խարբերդ, 1-ին փողոց, 38 վարչական շենք, ՀՎՀՀ 03801255)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>1. Խարբերդի մասնագիտացված մանկատան համար կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում և ներքնակների ձեռքբերում՝ 39,550,500 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>2. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 800,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>1. 100 հատ փայտյա մեծ չափսի (1900սմx800սմ) մահճակալների ձեռքբերում՝ 12,100,000 դրամ:</p> <p>2. 60 հատ փայտյա միջին չափսի (1600սմx800սմ) մահճակալների ձեռքբերում՝ 7,260,000 դրամ:</p> <p>3. 20 հատ փայտյա երկհարկանի մահճակալների (1900սմx800սմ) ձեռքբերում՝ 4,138,000 դրամ:</p> <p>4. 200 հատ ներքնակների ձեռքբերում՝ 7,000,000 դրամ:</p> <p>5. Մանկատան վեց խմբասենյակներում ներկառուցվող պահարանների ձեռքբերում՝ 9,052,500 դրամ:</p> <p>6. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 800,000 դրամ:</p>
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 800,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական	Չեն նախատեսվում

	ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ